ՆԱԽԱԳԻԾ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

«ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Արտոնագրային վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2011 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-91-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերից հանել «վերցնելու և հարկային հաշվառումից հանելու» բառերը:

Հոդված 2. Օրենքի N 1 հավելվածում՝

1) 4-րդ կետում «35,0» թիվը փոխարինել «18,0» թվով.

2) 12-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 13-16-րդ կետեր.

«

13.	Արտադպրոցական դաստիարակություն մշակույթի բնագավառում	12,0	5,0	3,0
14.	Թիթեղագործական գործունեություն	12,0	5,0	3,0
15.	Զոդման գործունեություն	54,0	43,0	32,0
16.	Խառատի գործունեություն	54,0	43,0	32,0

»:

Հոդված 3. Օրենքի N 2 հավելվածում՝

1) 7-րդ կետը «նորոգում» բառից հետո լրացնել «, այդ թվում՝ մետաղադրամով շահագործվող ավտոմատների միջոցով ավտոմեքենաների լվացում» բառերով.

2) 10-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 11-13-րդ կետեր.

«

11.	Մետաղադրամով շահագործվող ավտոմատների միջոցով խաղերի կազմակերպում	ավտոմատ	15,0	12,0	9,0
12.	Մետաղադրամով և (կամ) թղթադրամով շահագործվող ավտոմատների միջոցով սննդի	ավտոմատ	15,0	12,0	9,0

	առևտրի կազմակերպում				
13.	հեծանիվների, անվաչմուշկների, սկուտերների, հիրոսկուտերների, հովերբորդների վարձույթ	հեծանիվ, անվաչմուշկ, սկուտեր, հիրոսկուտեր, հովերբորդ	54,0	32,0	21,0

»:

Հոդված 4. Օրենքի N 3 հավելվածի երկրորդ աղյուսակը 12-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 13-16-րդ կետերով.

«

13. Արտադպրոցական դաստիարակություն մշակույթի բնագավառում					
14. Թիթեղագործական գործունեություն					
15. Զոդման գործունեություն					
16. Խառատի գործունեություն					

»:

Հոդված 5. Օրենքի N 5 հավելվածի աղյուսակը 12-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 13-16-րդ կետերով.

«

13. Արտադպրոցական դաստիարակություն մշակույթի բնագավառում			
14. Թիթեղագործական գործունեություն			
15. Զոդման գործունեություն			
16. Խառատի գործունեություն			

»:

Հոդված 6. ««Արտոնագրային վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2016 թվականի հունիսի 30-ի ՀՕ-21-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասում «2016 թվականի դեկտեմբերի 31-ը» բառերը փոխարինել «2017 թվականի դեկտեմբերի 31-ը» բառերով:

Հոդված 7.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո տասնօրյա ժամկետում կատարվում է Օրենքի N 1 հավելվածի 4-րդ կետով նախատեսված գործունեություն իրականացնողների 2017 թվականի (եռամսյակ, կիսամյակ, ինն ամիս, տարի) համար հաշվարկված արտոնագրային վճարի վերահաշվարկ և ավել վճարված գումարն

ուղղվում է հարկ վճարողի ապագայում առաջացող արտոնագրային վճարի մարմանը և (կամ) վերադարձվում:

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Օրենքի N 1 հավելվածի 13-16-րդ և N 2 հավելվածի 11-13-րդ կետերով նախատեսված գործունեության տեսակներ իրականացնողներն արտոնագրային վճար վճարող համարվելու համար առաջին անգամ դիմում-հայտարարությունները իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում և արտոնագրային վճարը վճարում սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից հետո՝ քսան օրվա ընթացքում:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝ **Բ. ՍԱՀԱԿՅԱՆ**